միջոցէս վերադառնայ Տաճկաստան։ 28 Նոյեմբ. թ. 1578։

Դիւանի գրութեամբ պատուիրուեց Ղարսի Հոգևոր կառավարութեան վաւերացնել Համազասպ քահ. Ղարագեօղեանի կազմած բժշկապետ Աղէքսանդր Տէր Յարութիւնեանի կատարած գոյքի և բոլոր դրամական եկամուտների և պահանջների ցուցակը և ուղարկել Նորին Վեհափառութեան։ 28 Նոյեմբ. թ. 1580։

Դիւանի գրութեամբ պատուիրուեց Ղարսի Համազասպ քահանայ Ղարագեօղեանին կազմել բժշ. Ա. Տէր Յարութիւնեանի կատակով թողած գոյքի և դրամական եկամուտների և պահանջների ցուցակը և Հոգևոր կառավարութեան վաւերացմամբ ուղարկել Նորին Վեհափառութեան։ 28 Նոյեմբ. 1588։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոնդակով գոհունակութիւն յայտնուեց Նոր-Նախիջևան քաղաքի ս. Յովհաննու Կարապետի եկեղեցու երեսփոխան պ. Կարապետ Դէորդեան Թոջայեանցին՝ նորա ժրաջան գործունէութեան համար։ 30 Հոկտեմբ. թ. 1386։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան պ. Ստեփաննոս Աւետիսեան Բէշատուի անունով՝ Կիպալովդակի եկեղեցական-ծխական դպրոցի շէնքը իւր ծախքով շինելու համար։ 4 Նոյեմբերի թ. 1423։

Կոնդակ օրհնութեան պ. պ. Յովհաննէս, Եղիա և Դանիել Ղազարոսեան Մայիլեանների անունով՝ իրենց ծախքով Շամախի քաղաքում հայոց եկեղեցի շինելու համար։ 20 Նոյեմբերի թ. 1527։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոնդակ Ատրպատականի Առաջնորդական Փոխանորդ Տ. Կարապետ քահանայ Մանուկեանի անունով, որով շնորհուեց լանջախաչ կրելու իրաւունք։ 31 հոկտ. թ. 1396։

Կոնդակ Նոր Նախիջևանի Հոգևոր կառավարութեան նախագահ Մարտիրոս աւագ քահանայ Գանձապետեանի անունով, որով իրաւունք տրուեց կրել ականաչար քահանայական լանջախաչ։ 20 նոյեմբ. թ. 1526։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 645. Նոյեմբերի 5-ին Սինօդը լսեց Տ. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանի հոկտեմբերի 22-ի յայտարարութիւնը, իւր եղբայր Մկրտիչ աւ. քահանայ Տէր Սարգսեանի, որպէս հոգեբաժին հանգուցեալ երիցուհոյ և իւր, 100 ռուբլի Մայր Աթոռին նուիրելու մասին, այն պայմանով, որ յանձնուի այդ գումարը Պետական Դրամատունը և 100 տարի տոկոսներ բերելուց յետոյ, ստանայ Մ. Աթոռը. որոշեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին յանձնել Պետական Դրամատան Երևանի բաժինը Մկրտիչ աւ. քահ. Տէր Սարգսեանի նուիրած 100 ռուբլին, բարդ տոկոսով, 100 տարի ժամանակով. որից յետոյ գոյանալիք ամբողջ գումարը ստանալու է Մայր Աթոռը իբրև հոգեբաժին ի յիշատակ Մկրտիչ քահանայի և նորա երիցուհի Գոհարինէի։

Թ. 659. Նոյեմբերի 7/8-ին Սինօդը լսեց հոգևոր գործերի դեպարտամենտի այս տարուայ հոկտեմբերի 2-ի թ. 8969 գրութիւնը մետրիքական քաղուածների գինուորագրութեան ատեաններին ուղարկելով դեպարտամենտի գրութեան պատճէնը, պատուիրել Կոնսիստորիային անյապաղ կարգադրել, որպէսզի մետրիքական քաղուածներ կազմող հոգևոր հաստատութիւնները և պաշտօնեաները շտապեն